Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտություն է առաջացել կատարել հետևյալ փոփոխությունները.

Երկրում ռազմական դրությամբ պայմանավորված՝ պետական բանակին աջակցելու նպատակով՝ Համահայկական հիմնադրամին նվիրատվություն կատարելու, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու, զոհվածների հուղարկավորման համար ծաղկեպսակներ ձեռք բերելու և Արցախից Հայաստանում ապաստանած՝ մեր համայնքում գտնվող ընտանիքներին դեղորայքի, կոմունալ ծախսերի մասով որոշակի չափով օժանդակելու նպատակով անհրաժեշտ է հատկացնել դրամական միջոցներ.

1. Համահայկական հիմնադրամին նվիրատվություն՝ 6 000 000 դրամ
2. Զոհվածների ընտանիքներին 200 000-ական դրամ աջակցություն ցուցաբերելու համար՝ 3 000 000 դրամ
3. Ծաղկեպսակներ ձեռք բերելու համար՝ 1 000 000 դրամ
4. Արցախից Հայաստանում ապաստանած՝ մեր համայնքում գտնվող ընտանիքներին դեղորայքով օժանդակելու համար՝ 1 000 000 դրամ
5. Արցախից Հայաստանում ապաստանած՝ մեր համայնքում գտնվող ընտանիքներին կոմունալ ծախսերի օժանդակության համար՝ 3 000 000 դրամ

Կորոնավիրուսի տարածման աճի տեմպերի մեծացման հետևանքով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ միջոցներ նախատեսել հակահամաճարակային նյութերի ձեռք բերման և Արցախից Հայաստանում ապաստանած՝ մեր համայնքում գտնվող ընտանիքներին նյութական օժանդակություն ցուցաբերելու ընթացքում փաթեթավորման, տեսակավորման համար անհրաժեշտ պարագաների ձեռք բերման համար՝ 500 000 դրամ:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրավունքի գրանցման համար տարվա ընթացքում նախատեսված միջոցները չեն բավարարում, մինչև տարեվերջ նոր առաջացած ծախսերի համար անհրաժեշտ է 2 500 000 դրամ:

Նկատի ունենալով, որ համայնքում մանկապարտեզները՝ համաճարակի հետ կապված աշխատել են հեռավար, իսկ 2020թվականի հոկտեմբերի 7-ից անորոշ ժամկետով դադարեցրել են ծառայությունների մատուցումը, ծախսերը որոշակի չափով կրճատվել են, առաջարկվում է վերոնշյալ ծախսերը՝ 17 000 000 դրամի չափով

հատկացնել մանկապարտեզների համար բյուջեում նախատեսված սուբսիդիաներից և ըստ մանկապարտեզների հատկացված միջոցները նվազեցնել.

1. Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ 500 000 դրամ
2. Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ 3 000 000 դրամ
3. Թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ 3 000 000 դրամ
4. Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ 3 500 000 դրամ
5. Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ 6 000 000 դրամ
6. Թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ 1 000 000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան